# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 06 » հուլիսի 2026թ. № 232-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

**1.** Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2026 թվականի հուլիսի 10-ին ժամը 12:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով համաձայն՝ հավելվածի:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

**2026թ. հուլիսի 06**
**գ. Լոռի Բերդ**

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի

2026թ. հուլիսի 06-ի № 232-Ա որոշման

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**Անցկացման վայրը.** Լոռի Բերդի համայնքապետարան

**Անցկացման ժամանակը.** 10.07.2026թ. ժամը 12:00-ին

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը:

1. 1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստ 2026 թվականի հուլիսի 10-ին ժամը 12:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026թ. հուլիսի 10-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
**(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)**

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մաարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
**Զեկ. Ա. Ներսիսյան**

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:
**Զեկ. Ք. Մելիքջանյան**

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում փոփոխություններ կատարելու մասին:
**Զեկ. Մ. Հովսեփյան**

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի համայնքային սոցիալական ծրագիրը հաստատելու մասին:
**Զեկ. Ծ. Շահինյան**

2. Ելույթներ, առաջարկություններ:
3. Նիստի փակում:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փողոց, 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» հուլիսի 2026թ. թիվ 233-Ա

## ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂ ՅԱՂԴԱՆ 06-079-0012-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09.12.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 258-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ 11.03.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 356 ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արդա Ավագի Շիրմազանյանի /ծնված 20.01.1948թ., անձնագիր՝ AL0342047, տրված 20.01.2023թ. 053-ի կողմից/ լիազորված անձ Գիվի Մամեյի Քալաշյանի /անձնագիր 017464348, տրված 13.02.2025թ. 039-ի կողմից/ կողմից ներկայացված դիմումը, 23.06.1994թ. տրամադրված սեփականության վկայագիրը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ կառավարության 13.03.1991թ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տնամերձ հողամասեր հատկացնելու մասին թիվ 209 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղմանկարգը սահմանելու մասին 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, կադաստրի կոմիտեից ձեռք բերված օրթոֆոտոլուսանկարները, 10.06.2008թ. իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով և հաշվի առնելով, որ ՀՀ Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Յաղդան 06-079-0012-0026 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.23243 հա մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք՝

**որոշում եմ**

1. Վերականգնել Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Յաղդան 06-079-0012-0026 կադաստրային ծածկագրում գտնվող 0.23243 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Յաղդան 06-079-0012-0026 կադաստրային ծածկագրի հողամասի մակերեսը 0.23243 հա

բ/ ճշտել և հաստատել 06-079-0012-0026 ծածկագրի հողամասի սահմանային չափերը և տեղադիրքը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.23243 հա օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Աիդա Ավագի Շիրմազանյանին և օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:
3. Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Յաղդան 06-079-0012-0026 ծածկագրի 0.23243 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 31.9 քմ ներքին մակերեսով բնակելի տան կիսանկուղի, 51.3 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 42.1 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 2.0 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի և 21.1 քմ ներքին մակերեսով անասնաշենքի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Աիդա Ավագի Շիրմազանյանի սեփականության իրավունքը:
4. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 09.12.2025թ. թիվ 258-Ա որոշումը և 11.03.2026թ. թիվ 356 գրությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

**2026թ. հուլիսի 07**
**գ. Լոռի Բերդ**